



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9366

891.99
9-76



891.99
2-76 и и
и

ՑՈՒՑԱԿ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ

ՄՈՎՍԻՍԻ ԶՈՀՐԱՊԵԱՆՑ

ԱՐՅԱՆԵՑԻՑ

ՄԸՍՆ ԸՓԸՔԻՆ

ԴՐԱՍԿՈՒ

Въ Университетской типографии (Клатковъ и К°),
на Страстномъ бульварѣ.

1870

891.99
2-76

Վ. 3. Կ

891.99
—
9-76

2306

ЕГО ПРЕВОСХОДИТЕЛЬСТВУ

БАКИНСКОМУ ВОЕННОМУ ГУБЕРНАТОРУ,

УПРАВЛЯЮЩЕМУ ГРАЖДАНСКОЮ ЧАСТЬЮ,

ГОСПОДИНУ ГЕНЕРАЛЪ-ЛЕЙТЕНАНТУ И КАВАЛЕРУ

МИХАИЛУ ПЕТРОВИЧУ

КОЛЮ БАКИНУ

613

СЪ ЧУВСТВОМЪ ГЛУБОЧАЙШАГО ВЫСОКООПОЧТАНИЯ И ИСКРЕННѢЙШЕЙ ПРЕДАННОСТИ

ПОСВЯЩАЕТЬ

Моисей Зурабовъ.

Дозволено Цензурою. Спб. 30 Сентября 1869 года.



5855

38

2003

*

* * *

Յառաջաբան խօսքերի աել,
Զհամարուի իմ մասին մեղ՝
Ասել միայն, թէ երբ ինձ նել,
Չանձիր ժամեր գէպ եղեն՝ գել
Թեթևութեանս ու զբաղմանց
գանումեմ միշտ մէջ պարապմանց,
Գրելով երգեր, անցք նոր, վաղանց,
Այլ գէպք, բերմունք, վարք, բարք կանանց:—
Այս էր պատճառ կամ նպատակ,
Որ ինչ ընկաւ իմ գրչի աակ՝
Ժողովեցի, և այս վաստակ,
Ահա իբրև 'ի յիշատակ
Վաղ օրերիս ախուր դաժան,
(Որով սրախ վէրքեր բուժան).
Երեք մասանց կարգաւ բաժան՝
Համարեցի տպելոյ արժան:—
Չեմ օրոնում գովեստ, պատիւ,
Գործ է թերի, սխալքս անթիւ:

Չեմ վշտանալ բնաւ սրտիւ
 Թէ կուզ դատեն ինձ վաս՝ խեթիւ
 Թառ չ'տայ ոք ինձ դոլասան,
 Պէտք չ'են ինձ խօսք ճոխ, ճարտասան.
 Չնշին նուեր այս իմնվասան
 Բերեմ Ազգիս, կամ անսասան:

ՀԵՄՎՊԱՏԱՄՈՅՆԻ

ՄԵԴՈՒ ԼՐԱԳՐՈՅ ՇՆՈՐՀԱՌՈՐՈՇԵՆՆ.

Բարենա դու եկիր քնքուշ նոր Մեղու,
 Հազիւ տեսաւ քեզ կարօտ Հայաստան.
 Ա՛ն, յօյս կայ՝ որ նա քեզ երկար թողու
 Ծածել հիւթ ծաղկանց յիւր մեծ անդաստան:
 Գալոյդ ուրախ եմ, տեսըդ շնորհաւոր,
 Եկ ինձ մօտացիր, տեսնեմ զմայեմ.
 Աստուած տայ լինիս ծեր արդիւնաւոր,
 Որ պարծիմ քեզնով, միշտ ցնծամ, փայլեմ:
 Փառք կենարանին, որ Հին Հայաստան,
 Կայելով այլոց ցանկալի բաղդին,
 Բացեց, թէ և ուշ՝ քեզ իւր գարաստան,
 Տալով կատարում իւր որդւոց ուխտին:
 Շնորհիւ մեր Կայսեր, Ճշմարիտ, քո Հայք
 Հարուստ են, միայն յայտնի է փորձով՝
 Զեն բացուել նոցա ոսկւոյ փաթութայք,
 Մինչեւ շտեսնեն արդիւնքը գործով:
 Առատ նուիրօք՝ շատերն Շուշեցւոյ,
 Ալամ մի միայն գիւղ իւրեան Արցախու,
 Որպէս Հազարիցս ցոյց են առւել այլոց՝
 Քեզ հարիւր տարուան կեանք կառնուն ծախու:

Հասուց է, իրաւ, հոգւով կարօտ է
Մեղմն Մասիս մայր մեր Հայաստան.
Գիտես նա ծեր և վաղուց ցաւոս է,
Տնուր նրան քաղցր գեղ թէ և յայլոց տան:
Հայոց մեղբասէր լինելոյն մասին
Հասոնք են խօսել, բայց ոք չէ ցաւել,
Այժմ դու եկ այլոց հետ ՚ի միասին
Զանք արա Ազգիդ շնուր մեղք տւել:
Ես, Ակադին պէս՝ ազգով բռն Հայ եմ,
Բայց պատահել է անունս Մուսայ է.
Ուստի ի՞նչ հարկ, որ աջ ու ձախ հայեմ,
Լաւ, վաս քեզ ընծայ՝ իմ երդս ան է:
Կրկին շնորհաւոր այս նոր քո տարին,
Նորածին մեղմ, դալուսարդ բարի.
Անփորձ, յաջողակ կեանքդ երկարին,
Չըդիպի երբէք քո ոտըն քարի:

ԳՅՐՈՒՆ ՀԵՅՅՈՍԵՆԻ

Բարեաւ եկիր, բարեաւ գարուն,
Բարեաւ նոր քո գալուստ սիրուն,
Մեծ է շնորհդ ով մեր գարուն,
Բարի է մուտդ յայս մեր գարուն..
Ո՞լ էր տեսել այսպէս փայլուն
Լոյսդ ծագէր վաղ շողշողուն,
Շէն մնաս դու միշտ հաստատուն,
Շէն լինի քո քաղցրիկ անուն,
„Մատաղ քեզ մեր ամեն տեղ տուն,
„Մատաղ վառվառն քո արեւուն:“

Հասեր անցին ամառ, աշուն,
Ցուրտ, ձին, անձրւ, ձմեռ, դարուն.
Բայց նոր՝ տեսաք մուտ քո զուարթուն.
Այսպէս հաճոյ ամենեցուն, —
Հաճոյ՝ որ Տէր մեր շնորհատուն
Նոր լոյս ծագեց մեզ պատարուն,
Ցղելով յառաջ քոյ սիրասուն
Գուշակ գարցդ գողտրիկ Մեղուն:
„Բարեաւ երկիր, բարեաւ գարուն,
„Բարեաւ նոր քո գալուստ սիրուն:“
Օրհնեակ լինիս նոր մեր Գարուն
Նոր արեւովդ պարզ աճեցուն:
Մեք թմրութեան էաք ՚ի քուն,
Անհոգութեան ՚ի խորս ծովուն,
Բայց բարերան՝ այս վաս մահուն
Յանկարծ շնորհեց կենդանութիւն,
Ցղեց մեղուն աւետատուն
Յանյոյս ծագաց Հայոց ՚ի տուն:
„Մեծ է շնորհն գարնանս սիրուն,
„Բարի է մուտն յայս մեր դարուն:“
Երանի քեզ ով Վասց տուն,
Որ ծընար մեզ նոր քո մեղուն.
Այս Հայոց չես տեղի բռն,
Բայց դու եղեր վերակացուն
Արարատայ և Կովկասուն,
Որ գեռ չհասած առաւօտուն,
Զորացաւ վաղ բռնով համբուն,
Բարձաւ անհետ նոցա անուն:
„Այժմ շէն մնաս միշտ հաստատուն,
„Շէն մնայ քո տեղի և տուն:“

Հէք Մուսայիս միայն խորուն
և ջերմ խնդիր և ցանկութիւն,
Որ քո որդիք ճոխ և գիտուն
Տացեն մեղուիդ կեանք իմաստուն,
Ման ածելով մէջ ծաղկներուն
Հայաստանի լայն դաշտերուն,
Առատ գետոց պերճ ծայրերուն,
Ժողվել քաղցրիկ հիւթ ամենուն:
 »Ո՛հ, մատաղ քեզ մեր գոյք արիւն,
»Լաւ պահպանիր մեր նոր Մեղուն:«
Խոկ ովք քնքուշ Մեղու սիրոնն,
Խնդիրս ՚ի քէն է միշտ արթուն
Կնիլ զդաստ ժիր և ներհուն:
Խնդիր փոքրիկ քո թեւերուն,
Զգոյշ թռիր ՚ի զլուխս անհուն
Արարատայ և Կովկասուն,
Որոց պատճառ եղեն ցուրտ, ձիւն
Քո նախորդաց անժամ մահուն:
 »Ո՛հ մատաղ քո քաղցր արեւուն,
»Զիւնիմ վսկայ այն վատ պահուն:«

ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԾՈՒՅՑԻ ԱՅՑ.

Երկու անդամ սիրով անյաղթ,
Յշեցի Մեղուիդ թռուղթ բարեմաղթ,
Յանկացայ քեզ երկար կեանք, բաղդ,
Ժողվով անունս անյայտ ու գաղտ:
Ինչ հարկ օգուտ՝ անունս տամ,
Հէք Մուսայն եմ աղջիդ անդամ.

Այժմ և սրտանց ասել փութամ,
Թէ շատ ապրիս՝ որ շատ խնդամ:
Տալ նիւթ մեղսիդ չեմ ես ժլատ,
Ըստ իմ կարեաց թէ լաւ թէ վատ.
Վառ է յիմ սիրտ սէր քո անհատ,
Միայն ափսոն, քիչ եմ ազատ:
 Սուտ պարծանաց չեն այս իմ բանք.
Դու չես տեսնել երբէք զրկանք,
Ես և շատոնք կառնեմք միշտ ջանք,
Որ վատ չխօսին այլոց բերանք:
Ճատ կան յարմար քո ճաշակին
Աստ և յԱրցախ ծաղկունք անդին,
Միայն կարօտ է մեր այգին
Քեզ պէս մեղսուի ժիր մշակին:
 Թռիր ՚ի վեր վատահ արձակ,
Ե՛կ և յայս կողմն ճոխ, ընդարձակ,
Համեզ են մեր ծաղկանց ճաշակ,
Ծծիր անյագ, կապիր շալակ:
Դու նոր ծնար նոր մեր մշակ,
Հայաստանի գարնան գուշակ.
Արա մեղսիդ նիւթ անուշակ
Շուշան, նարկիզ, վարդ, մանուշակ:
 Կնչպէս Կովկաս և Արարատ,
Քո աշխատանքն չթռուս թերատ,
Հեռի ՚ի քէն վատ այս արատ,
Երկար, յաջող ապրիս դու շատ:
Ահն նիւթական օգուտըն թռղ,
Բարի պաղոց լեր դու կըթռղ,
Կան քեզ համար շատ աղօթող
Թռղ երախտեաց անուանդ կոթող:

Կան և անձինք, որք ունին ահ,
 Կարծեն կ'հասնի շուտ և քեզ մահ.
 Ջանք արա տալ Ազգիդ լսու շահ,
 Որ պինդ պահեն միշտ քեզ անահ:
 Թող անցանէ այս նոր տարիդ,
 Կուզեն շատոնք սրտանց բարիդ.
 Ժիր աշխատիր լե՛ր ճշմարիտ,
 Կլինիս շուտ թանգ քան մարդարիտ:
 Յետ բարեմաղթ այս իմ բանից՝
 Տամ քեզ համբաւ Ծուշոյ անցքից.
 Առնել և քեզ հաղորդակից
 Իմ խնդութեան սերաւ, հոգելից:
 Բայց մինչև այն մի՛ նեղանար,
 Որ աստ կամիմ ես պարզաբար,
 Զգել իմ խօսքն փոքր ինչ երկար՝
 Հետաքըթիր մարդկանց համար:
 Բերդաքաղաք է մեր Ծուշին
 Մէջ Արշախու մեծ նահանգին,
 Յերից կողմանց սարք ահազին
 Բնութեամբ հիմնած են պատ բերդին:
 Բարձր է տեղին շատ գեղեցիկ,
 Ժայռիք խորին, պինդ, անսառիկ.
 Ամառն հով, ձմռն սաստիկ,
 Առողջարար օդըն քաղցրիկ:
 Սա չէ քաղաք մեր Հայոց հին,
 Այլ շնուած է Փանահ խանին
 Տասն եօթներորդ դարու միջին,
 Մեր Մելիքաց ժամանակին:
 Երբ որ եղեւ չէն, հաստատուն,
 Ծուտ շնուեցան շատ տեղ ու տուն,

Իսկ տունք Հայոց յայն իսկ դարուն
 Են հաղար և քառասուն:
 Ցետոյ գարձաւ մեծ, ամեցուն
 Երեկի քաղաք սիրուն
 Եւ այժմ Հայոց թիւ ամենուն
 Եւ ինն հաղար հարիւր ութուն: —
 Ցառաջ եղբ ես էի Ծուշի
 Տհաս մանուկ բայց ՚ի յուշի.
 Ծառք չունեին հաց ու փոշի
 Աղքատաց պէս յայտնեոյն Մուշի:
 Բայց այժմ շնորհիւ մեր Մեծ Կայսեր
 Հայք ճարել են անթիւ փողեր,
 Ոնին քարեայ շատ ճոխ աներ,
 Հարուստ ապբուստ, կեանք անվեհեր:
 Մուր են ուշիմ, չունին կարիս
 Ցառետուրս մեծ գանձեն բարիս,
 Չափեն ոտիւք հարաւ, հիւսիս,
 Ծովլիք, Եփրատ, Երասխ, Տիդրիս:
 Զկայ գողցես կողմ աշխարհի,
 Ուր չգնան ամէն տարի,
 Մրաստ են ժիր, քաջ և արի,
 Ոնին արդեամբէք անուն բարի:
 Ասո հոյակազ կան զարդարուն
 Եկեղեցիք, մի վանք սիրուն,
 Ուր գատնին պարկեշտասուն
 Կուսանք յուսմունս կիրթ և հասուն:
 Բայց քան զամէն թանկագին գանձ,
 Վան է առ Ազգ սէր գերապանձ,
 Ճիշտ հետեւուն կրօնին Հարանց
 Գնահատութիւն օդտից տամանց:

Վաղոնց է աստ Հայոց լեզուն
 Ունի մեծ յարդ յաշա ամենուն,
 Ծագել է նա իւր լոյս փայլուն
 Առ հասարակ ամէն աեղ, տոն:
 Լեզուք Ռուսաց, Պարսից, Թաուրքաց
 Սովորական են մէջ բազմաց.
 Հաս կան որդիք և աղքատաց
 Տեղեակ յիշեալ չորից լեզուաց:
 Քիչ են անձինք անկիրթ, անսանձ,
 Ունին բոլորք բարի նախանձ.
 Խակ որ զորկ է ՚ի գիտոթեանց,
 Համարի թվում մարդկանց:
 Հարկ չէ երկար ինձ պատմել աստ,
 Կարճն ասեմ՝ խելօք, զգաստ,
 Ազգասէր են, Հոգովը պատրաստ
 Տալ ամենից բարեաց նպաստ:
 Կահանգն է մեծ լայն, ընդարձակ,
 Ունի հարուստ վեց գաւառակ.
 Անթիւ են գետք, աղբիւրք, վտակք,
 Բուսոց, աղոց պէսպէս տեսակք:
 Անհամար են պարտէզք, այդիք.
 Զանազան ծառք, թաւուտ մայրիք.
 Տաւար, ոչխար, գովանի ձիք,
 Եւ այլ ամէն չորքոտանիք:
 Աստ շատ լինին և լաւ գինի
 Անշափ բրինձ, ցորեան, գարի,
 Բամբակ, տորոն, ծառք թթենի
 Քանի քանի հանք պղնձի:
 Երկիրս, իլուա՝ է հայրենիս,
 Բայց ուղեղ են միտք ողջ բանիս.

Ե՛կ տես սրան յամնեան Մայրիս,
 Հարուստ բնութեամբն շատ կ'զմայլիս:
 Ի՞նչ երկարեմ թել իմ բանի,
 Ըստոնց վաղուց է քաջ յայտնի՝
 Թէ աստ յԱրցախ անշափ քանի
 Կան սուրբ տեղիք մեր Հայրենի:
 Ո՛չ ուր է զրիչ տնող լաւ ձիր,
 Կամ փորձ, հմուտ նկարագիր.
 Որ կարենայ անցյնել ՚ի գիր
 Ճիշտ առարկայք աստ ցանուցիր:
 Դու մեր Մելու հնար ճարիք
 Գալ և յայս կողմն պերձ, բարելիր,
 Եւ կամ այլ ոք հմուտ յղիր
 Լինել տեղւոյս հանդիսագիր:
 Ասեմ և այս՝ թիւ ամենուն
 Են աստ բնակչաց ազգաւ Հայք բուն
 Յիսուն հազար և իննուն,
 Եկեղեցիք հարիւր վաթուուն.
 Ան ինձ ների՛ր ես մոռացայ,
 Եւ իմ մաքից շատ հեռացայ,
 Թողի անվերջ՝ ինչ խոստացայ,
 Լաւ չէ, վայ ինձ՝ որ ուշացայ:
 Կամքս էր տալ լուր բարի անցքից,
 Առնել ազգ մեր ինձ ինդակից.
 Ահա նոր թել նոր գովեստից,
 Ցապացոյց իմ անցեալ բանից:
 Շուշին ինքեան բաղդ համարի,
 Որ կարգեցաւ յանցեալ տարի,
 Աստ սրբազան Գեորգն արի,
 Հոգեոր Հայր Տեսուչ բարի:

Ծնայելով կարճ միջոցին,
 Պայժժառացաւ նոր մեր Շուշին,
 Գթով, սիրով իւր քաջ հովսին
 Ճանայ համել ոսկեայ գարին:
 Արդեամբ նոյն Հօր գործոց, ջանից,
 Նոր հիմն եղեւ ուսմանց, մարզեց,
 Բացաւ գպոց լեզուաց երից,
 Որոց համար և ամենից:
 Սա այժմ ներքոյ իւր թեւերուն
 Ունի մանկունք հարիւր յիսուն,
 Ուսուցչքն են ընտիր, գիտուն,
 Վարեն իւրեանց պաշտօն արթուն:
 Շուշոյ մէջ կայ լայն և հարթար
 Հասարակաց մեծ ճանապարհ,
 Շինել են անդ նոր Տաճար
 Մեծակառոց ձեռլ ճարտար:
 Հայք աստ ունին հին տպարան,
 Գնեալ ծախիւք ժողովորեան,
 Սա փոշեթաղ եր յաւերման,
 Անգործ, անշահ ՚ի մոռացման:
 Կոյն մեր ժիր Հօր միտք իմաստուն
 Կորոգեց նրան ճնին հաստատուն:
 Փառք Աստուծոյ, յայս մեր գարուն
 Տեսաւ և այն լյս արեւուն:
 Լուր ինձ ՄԵղու՝ ՚ի քո շալակ
 Ունիմ բարձել ես նոր թոշակ,
 Առ տար և այն թեօքդ բարակ
 Յընծայ Ազգին, քաջ սուրհանդակ:
 Ե՛րթ մեղմաձայն, որախ ասաւ,
 Աւետէ քեզ քո հեք Մուսայ,

Թէ շինի վանք Ամարասայ
 Չեռօք մեր նոր Մեկենասայ:
 Սորբ այս տեղի է քաջ յայանի,
 Հին պատմութեան մէջ անգամի,
 Լուսաւորչեան թուրին ունի
 Սուրբ մասոնքն Գրիգորիսի:
 Տեղի էր հին Հայոց ուխտի,
 Բայց ըստ անդութ բերման բաղդի՝
 Թափուր, աւեր, բարձ ու թողի,
 Կայր, միայր կարօս այց երողի:
Հ
 Այժմ աղայնոց մեր ջերմեսանդ
 Հաւատ շարժեց սոցա եռանդ,
 Եւ ահա նոր հզարապ անդ
 Կանգնի տաճար գարուց յաւանդ:
 Այս գործոց մէջ չմոռացաւ
 Հայր մեր Հովիւն իւր հոգույ ցաւ,
 ԱՌ գեղեցիկ հոգ հոգացաւ,
 Մեծ ինդութեամբ սիրտ մեր լցաւ:
 Հայցնես՝ թէ ի՞նչ այս հոգ արժան,
 Պատրաստ հոգւով տամ պատասխան
 Ուտեաց համար ժողովրդեան
 Կրացիկ Հայոց ուսումնարան:
 Այս գործ մէծ է քան միւս զամեն,
 Որ մեր Ուտիր, Կիմ, Վարդաշէն
 Բնակին, թէ և բուն համօրէն
 Հայք են, խօսին ոչ Հայերէն:
 Այժմ շնորհիւ Հօր Արբագան
 Կոքա, և այլք նոցա նման
 Կոտորեն իւր հայրական
 Լեյուն ՚ի փառա Ազին Հայիեան:

Բաց յայսցանէ մեր Քաղաքին
 Հայք մեծ գումար պատրաստ ունին,
 Ըստ խորհրդոյ նոյն վեհ Հովուին՝
 Բանալ գրատոն աստ Ազգային:
 Շինել ունին կ'յ ընդ գրատան
 թանգարան վերծանութեան,
 Որք ՚ի պատիւ Հօր Սրբազան
 Պիտի կոչուին „Սուրբ Գէորգեան:“
 Իսկ թէ ոյք են անուամբ, ազգաւ
 Շինողը նոյին և ինչ կարգաւ,
 Կրել ունիմ և այս համբաւ
 Ես յետ սորտ ջոկ նամակաւ:

ՌԵՄԵՐԵՄԵԴ ԹԱՐԻՒԹՅՈՒՆ

Երկրորդ նոր տարիդ լինի շնորհաւոր,
 Գողտրիկ մեր „Մեղու“ ժիր վասանկաւոր.
 Աստուած տայ երկար քեզ կեանք բաղդաւոր,
 Լինիս միշտ յաջող, անխոնջ, փառաւոր:
 Լաւ կատարեցիր քաղցրիկ քո պարաքն,
 Տեսանք գովանի քո վարք ու բարքն,
 Ինչպէս վայելուչ եր դարուս հարկն՝
 Պահեցիր սիրուն քո կարգ ու սարքն:
 Քաղցր է մեզ համոյ, ինչ գու գործեցեր,
 Շատ ընտիր ծաղկանց հիւթն մեզ բերեր,
 Գեղեցիկ կերպով հին, նորն խառնեցեր,
 Ամէնն ինչ որ մեզ եր պէտք, շահաբեր:
 Ի՞չքան եր մեր կամք ու սէր փափակն,
 Առինք քո համեղ մեղքի ձաշակն.

Շէն՝ հաստատ մընայ առատ փեթակն,
 Օրհնուի՛ բարելիր „Մեղուիդ“ վաստակն:
 Այժ, ողջ տարին ցերեկ ու գիշեր,
 Քուն, հանգիստ, գագար բընաւ չտեսեր,
 Ման եկիր սարեր, գաշտեր ու ձորեր,
 Ծծեցիր անոյշ բուսեր, ծաղկունքներ:
 Գիտենք՝ ճանճք, բզէզ, կայծոսիկ, ծզրիդ.
 Շատ դէմ ելան քեզ մէջ ճանապարհիդ,
 Զանք արին դընել արդելք թերիդ,
 Խլել բանաբար բոն բեղուն բարիդ.
 Բայց նոցա բղումն, ջանք, ճիզն անվայել
 Քեզ ոչ կարացին վընաս տալ, յաղթել,
 Եւ գու քո թափէքն հանգարտ, անարդել
 Յառաջ վարեցիր կարգաւ, փորձ, ընդել:
 Մեք փոսուայից սուտ լոյս տուողաց
 Չենք կարող կազել ոշինչ յոյս բարեաց . . .
 Հասու ենք „Մեղուիդ“ լու աշխատանաց,
 Գու ես հարագաւ բերք մեր Հայրէնեաց:
 Քեզ է միշտ պաշտպան Մայր քո՝ Հայաստան,
 Տեղեակ է նա միւս ճանճռանց սերնդեան,
 Խորթ նոյց բնութեան, ճգանցն անպիտան. . .
 Ծուռ մուռ թաւչելոյն, բզզալոյն խոտան:
 Նա ճնաւ քեզ պահեց ինքեան սեպհական,
 Բացաւ առաջիւ իւր մեծ անդաստան,
 Տուաւ ծծել հիւթ ծաղկանց բիւրազան,
 Շինիր մեզ աղնիւ մեզը պատուական:
 Կպահենք քեզ միշտ մեք անկեղծ սիրով,
 Գոհ ենք քեղանից սրտով ու հսկուվ.
 Պարծանք լինիս մեզ բարի ընթացքով,
 Ուղ կենօք առատ, շահաբեր ջանքով:

Ահա նոր տարի, քեզ և նոր հանդէս,
 Աշխատիր անդուլ անցիալ տարւոյ պէս,
 Նոր քո խորիսիներն հանիր, բայց ՚ի տես,
 ՚ի փորձ, ՚ի վայելս ճաշակաց պէսպէս:
 Դու ուշ մի ձգեր օտար տեղերին
 Մարիկ տուր Հայոց բարձր սարերին,
 Լայն մեծ դաշտերին, խոր, հին ձորերին,
 Անուշ ծաղկներին, առատ բուսերին:
 Տե՛ս քանի՞ հարուստ ես քո կալուածքով,
 Տե՛ս՝ ո՞լ է քեզնից մեծ իւր ստացուածքով,
 Զանք արա ուրեմն լինել և դորձքով,
 Արժանի կոչմանդ բարի վաստակով:
 Յուսով ենք, յուսով՝ «Սեղու» գեղեցիկ,
 Որ բարակ թևերդ, սոներդ փոքրիկ
 Կման և յապայն անվընաս, ողջեկ,
 Կ'տան անպակաս մեզ մեզը զուտ, քաղցրիկ:
 Տայ ուրեմն Աստուած դալ երբորդ տարին,
 Ո՛ղջ լինենք, հասնենք ցանկալի օրին.
 Որ նոր օր հնելով՝ մաղթենք քեզ բարին,—
 Տաս պտուլ շահուց միով հաղարին:
 Քեզ բարձր օր, կեանք և բարձր վախճան,
 Աստուած լինի քեզ պահնորդ, օգնական,
 Պահէ ել ու մուտդ՝ անփորձ, անսասան,
 Բարեաւ միսս, գնա՛ Տէրամբ անխափան:

ԿԵՇԱԹԻՒՆ ԵՒ ՄԵԴ ՄԵՇԱԴ
 (Ա Ռ Ա Կ)

Մանր թռչող կենդանեաց, կամ այլաբար՝ միջատաց
 Կայ մի տեսակ կածոսիկ կամ փոսուրայ անուանուած.
 Սա գորշախայա է գունով, ունի բոլոր գեղծ կաղմած,
 Եղնաձնոյ է նըման, բայց գունչն սուր, առան բաց:
 Զհայելով այլանդակ, տղեղ ձեւոյն, կազմածին,
 Կայ նորանում բնութեան տուած ձիւք մի առանձին,
 Այն է նորա ունեցած կարճիկ տուարն մերկ, տեղին,
 Որ աալիս է ինքն ինքեան փայլինչ լուսոյ գիշերին:
 Անհաշտ ունի սա ՚ի բնուատ, վատ սովորոյթ գարշելի,
 Պատրաստ է միշտ կառուուել հետ իբանից մեծերի.
 Ինչ տեղ գտնէ օթարան այլ միջատաց բոյն, տեղի,
 Անահ, վատահ նոցա մէջ կըմտանէ, կըխաւնուի:
 Հատ կաշխատէ լրբաբար ճանկով, սուքով, թեւերով,
 Երկիւղ տալ ու փախցնել, նրանց բունից բոլորով.
 Տուան շուտ շուտ ցայց կտայ, որպէս թէ նա իւր լուսով,
 Լուսաւորիչ, մեծ նոցա ստեղծուած է Աստուծով:
 Պարզաբանել ինչ հարկ է, որ անձնապարծ ինքնիշխան,
 Կերք միջատին ջանքըն է, գործ զնելով իւր լըթան,
 Հնար գանել աշխատած այլոց վաստակն քրտնաջան
 Խլել ինքեան կերպակուր, թողուլ ընկերն՝ զուրի ունայն:
 Այսպէս մի օր աներես, անհաշտ մեր այս կենդանին,
 Յանկարծակի դուրս ելաւ ճանապարհին գեմ Մեղսուին,
 Որ փութաջան իւր յայտնի հանդարա բարուքն առանձին
 թռութուումէր՝ բղայալով բուտոց վերայ ծաղկներին:
 Չդիմացաւ նախանձու՝ սիրտ միջատին մեր ծանօթ,
 Յառաջ խաղաց համարձակ յոխորտանօք անսամօթ,

Եւ անհամբեր խօսք բացաւ հետ անմեղին յասմնուս,
թէ ի՞նչքան կայ քեզ այս տեղ, վաս դու մեղու քսամնոս:
Ո՞վ տուեց քեզ իրաւոնք ման գալ մէջ իմ դաշտերին,
Դու շրջմոլիկ, վայրասուն, սևահողի հողածին.
Գիտես՝ ես բնաւ կամք չունիմ նայել քեզ պէս ընկերին,
Մինչեւ լսել քո անունն՝ ցաւ է սաստիկ իմ սրտին:
Միթէ խռու ես, չես լսել, գու անհմաստ ու անպէտ,
Որ լնդհանուր միջատաց ես եմ միայն իշխող, պէտ,
Կոյն յո սեսին տէր, շահ, բէկ, դէտ, առաջնորդ, յեղապէտ,
Զկայ այլ և բաց յինէն, ոչ իմաստուն, ոչ վարպէտ:
Կոյր ես, մի թէ չես տեսնում գու իմ լոյն համասփիւռ,
Որ տալիս եմ անխնայի, թէ և շատ թանդ ճանձից բիւր.
Ո՞վ կարող է գէմ կենալ առանց տալոյ ինձ դիումին իւր,
Ուստի ելեր, ուր եկէր, անկիրթ մեղու յիմար, թիւր:
Գիտես ինձ հետ չէ կարող բանալ հանդէս խօսութեան
Ով և իցէ՛ ծանօթ իմ պատուոյ, փառաց և անուան.
Ես եմ միայն, որ հասի բոլոր տեսակ բարութեան,
Զկայ երբէք աշխարհում, հզօր, ճարտար՝ ինձ նման:
Այս օրինակ և այլ միւս խօսքեր խօսեց այն լիտին,
Վայր ՚ի վերոյ գուրս տալով ի՞նչ հաճոյ էր իւր կամքին.
Զհաւանեց ոչ ոքին, ամէն գիտնոց աշխարհին,
Ասաց ամէնքն և չարժեն կեղաստ նորս մի ոտքին:
Խեղձ մեր Մեղուն զարմացած՝ մընաց սառած լուռ միջիկ,
Տալ պատասխան այն լրին չնուզ ձեռով խիստ, սաստիկ.
Ապա դարձոյց գէպ ՚ի նա ուշն իւր, ասաց հանդարտիկ,
Մի տաքանար բնաւին, թո՞ղ բարկութեանդ այդ ալիք:
Ով իցեմ յայտնի եմ վաղուց թէ մեծ, թէ փոքրիկ,
Հաստատ բարուցս, սննդեան, իմ կանոնացս ես բնիկ,
Ման եմ գալիս դաշտաց մէջ ծաղկանց վերայ գեղեցիկ,
Ծծել, տանել յիմ փեթակ մեղրիս համար հիւթ քաղցրիկ:

Թէ յեղապէտ, թէ վարպէտ, թէ շահ ես բէկ ինքնիշխան,
Թէ լոյս, պարծանք, զիտնական, կամ թէ այլ ինչ աննման,
Ինչ և իցես, կաց հանդարտ, կաց վիճակիդ բաւական,
Բայց մի՛ լինիր գու բարձող քոնմանեաց հանգստեան:
Ի՞նչ հարկաւոր աւելորդ, կծու խօսքով ինքն հաւան,
Խառնվիլ ամէն դործ ոյ մէջ, որ չեն պատշաճ ու պատկան,
Կրուստիլ միշտ կամ գոռաւ, քեզ ի՞նչ հարկ պէտք կամ
արժան,
Ի՞նչ և վայել քո կոչման յոյց տալ ինքնդ գերբնական:
Միջատ ես գու ոչ այլ ինչ, չեն թուում քեզ փիզ ու ձին,
Քանի մի բան զիտելով, չես հաւանում բոլորին,
Կարծես փոքրիկ քո արտան կայծով լուսոյ սին, չնչին,
Լոյս տուող ես ողջ աստեղց, արեգական և լուսնին:
Չես հաւանում ոչ ոքին, բայց ուշ դարձուր ինքնդ
ինքեան,
Միթէ Աստաւած ստեղծեց քեզ ինչ միայն աննման.
Քո սաստիկ նայելով, չկայ այլ և մէջ մարդկան,
Քեզ հաւասար բընաւին, գուցէ և ո՛չ վերնական:
Ան ինձ լսի՛ր, սիրելի, թո՞ղ այդ բնութիւնդ ատելի,
Ինչքան իցես մեծ, հզօր, գիտուն, խեղօք և արի,
Թո՞ղ այլք լինեն զնահատող քո իրաւանց, քո սեսի,
Իսկ գու ինքն յած պահիր, պատուիդ համար աւելի:
Ո՞ր գերազանց քո խելքըն . . . երբ մնուացար հին
Նախնեաց,
Աստուածատուր օրէնքն, կարգ ու վարքըն ձեւ կենաց.
Ի՞նչ ես կարծում գու գառնալ, ազգ ու տակըդ դէն գցած
Ասիւծ, թէ մարդ, թէ հրեշտակ, և կամ մեղայ թէ
Աստուած:
Այսպէս և այլ խրատիւք խօսէր Մեղուն բարեսէր,
Կածոռակին հետ հանդարտ, բայց և յետոյ տալ խնդրէր

իրան ազատ ճամապարհ։ իսկ երբ լիտին այս լուր,
Խիստ առաջարկ աւենդ ջերմի թաշոտումքը վայր ՚ի վեր։
Ապա բացեց սանձարձակ նա իւր լեզուն վատ, անփակ,
Արտի փղձուկն հանելով, դուրս տուեց շատ ստանհակ
Անարդանք գէմ խեղճ Մեղուին, նորա ազդին հակառակ։
Որ լուրոյ չէր արժան, չէր եղած և օրինակ։
Հաեց Մեղուն մեր պարկեցաւ, յետոյ գարձաւ հեռացաւ,
Բայց չարըն այն կածուիկ նոր աւելի կածացաւ,
Գլնաց նորա ետեւէն . . . երբ իեթակին մօտացաւ,
Անահ, անխոհ յետ Մեղուին ձգեց ինքն մէջ մոտաւ։
Տեսին այս լիբը արարքը անկոչ հիւրին անյարմար,
Փեթակին մէջ Մեղուքըն բազմութեամբ մեծ անհամար,
Թափուեցան շուռ բարկութեամբ նորա վերայ հաւասար,
Հագար ու մէկ խայթոցով խոցուեցին չարաչար։
Այսպէս ապա կիսամահ նա ՚ի վարձ իւր գարշ գործոց,
Գուրս քաշու եցաւ փեթակից, մնաց քանի մի միջոց։
Յետոյ երբ որ զբուա ինչ թեթեութիւն այն ցաւոց,
Շուտ հեռացաւ կորակոր, անելով մեծ ողբ ու կոծ։
Բայց զարմանք է՝ այն լիտին, չանցաւ երկար ժամանակ,
Մոռանալով քաշածքիւր հին բնութեամբ բիրտ, վայրակ,
Տեսաւ մարդ մի իւր գործում ուներ ձեռին վառ ճրագ,
Վաս վեցաւ նոր նախանձը, կարծեց ինքեան նըշաւակ։
Ուստի անխոհ խուճապաւ վերայ թուաւ այն մարդոյն,
Եւ յետ տալոյն անարգանք, վաս նախառինք գոյնագոյն,
Ասաց միթէ չէ յայտնի քեզ յատկութիւն իմ աըտնոյն,
Ի՞նչ է այդ քո ճրագըն մօտ անշէջ միշտ իմ լուսոյն։
Այս միջոցիս բարկացած ձգեց ինքն մէջ ճրագին,
Այն գիտմամբ՝ որ հանգյնէ, բայց ՚ի նոյն իսկ վայրինին,
Այրվեց թեւեն, այսվեց ողջ, եղեւ նորա վերջ կեանքին,
՚ի վարձ վերջին ստահակին, յամսու կամքին, վատ գործին։

Թո՞ւ լինի քեզ օրինակ, ով ընթերցօվ՝ այս առակ,
Սի՞ լինիր դու բնաւին նախանձու և ստահակ,
Ինչքան իցէ քո պատիւ, շնորհ, ուսումն գերտնակ,
Կաց հեզ պարկեցաւ, մի՛ լինիր անձնակամակ, սանձարձակ։
Ոի՛ և ատեր քո ազգըն՝ նման յիմար միջաւին,
Աշխատիր միշտ ըստ կարեաց նորա վասոքին ու օղորին,
Ճանաչիր չափ քո անձին, վատ մի՛ ասեր ընկերին,
Որ ընդգէմ է բրնական և Արբազան օրէնքին։

Ե Պ Ա Զ

Նշանաւոր երազ տեսի մի զիշեր՝
Լոյս շաբաթ եր գեկաւեմերի երեքին,
Երբ յերեկոյն մատածմունքից վշտաբեր,
Խիստ նեղացած էին իմ սիրու ու հոգին։
Աւելորդ է խօսել վերայ այն մոտածմանց,
Պատմեմ միայն ինչ որ տեսի երազում։
Երեսումէր աչքիս մի լայն, գերազանց,
Վիրուն ծալինոց կանաչաղարդ մեծ գաշտում։
Վիրտըս ինդաց, շտապեցի զբնալ մօտ
Տեսնել ինչ կայ այնտեղ, բայց երբ մօտացայ,
Փչեց զմայլիչ ինձ այնտես մի անոյշ հոս։
Որ հիացած մնայի կանգնած ակամայ։
Փոքր ինչ անցաւ, քանի մի ոտք փոխեցի,
Հասի այն իմ տեսաբանի նեղ գրբան,
Եւ երբ շեմքն ներս մտնելոյ կոխեցի,
Տեսի մի մարդ կապեալ, մօտին կախաղան։
Չիդ էր հասակն, գէմքն խոժու, ոյիսնդակ,
Կնձուած ճակատն, հայեացըն խիստ, կատաղի,
Յուց Ա.

Քատմնած էր զլիսոյ մազն սեռակ,
Եւրոպայի ուներ հաղուստ չուխայի:
Քիչ մի հեռի, սե ծածկովով կայր սեղան,
Որոյ վերայ կային թուղթք, դրիչք, կաղամար,
Կանաչ թղթով կազմած գրեանք ցիրուցան,
Ճախս մոմակալ, մեջ տեղը մի մեծ տումար:
Երկար միջոց մնացի ես լուս. մտադիր,
Նայումի այս բաներին, այն մարդոյն,
Եւ վայրենի սորտ դէմքից դարշ զազեր,
Թափիումէին քէն, չար նախանձ, ժանդ ու թոյն:
Զարմանք տարաւ ինձ, չիմսցայ ովլ էր նա,
Ի՞նչ էր պատճառ խեղճ դրութեան անբաղդին,
Թէ պատժապարտ՝ էր պահպանորդ ոք չկայ,
Է՞ և պիտի բայ դուռն այն ծաղկնոցին: . . .
Ի՞նչ և իցէ տալով նորան ես ողջոյն,
Վայել չէ ինձ, ասացի, որ անհրաման,
Մոտի քեզ մօտ . . . բայց նա անխօս մի և նոյն,
Տեղը կանդնած, չտուեց ինձ պատասխան:
Քիչ մի մնացի, կրկն վատահ խօսք բացի,
Թէ էր այդպէս լուս ես կացել . . . մի բերան
Տուր պատասխան, լսեմ, ովլ ես, ասայի,
Ի՞նչ տեղ է այս, ինչ այն սեղան, կախաղան:
Նա այս անդամ կամաց, ահով, ծանրապէս,
Ասաց, գնամ մօտ սեղանին գրեանքից,
Անդիկալ մի հատն, տար քեզ համար կարդա, տե՛ս,
Ի՞նչ մարդ եմ ես՝ կ'ձանաշես իմ դործքից:
Այն գըքերից շուտ մի հատը վեր առի,
Կազմին վերայ տեսի դրոշմած կայր պատկէր
Առաւոտեան արշալուսի և սարի,
Որոյ կողմից արեգական լոյս ծագեր:

Բայց մինչեւ ես կարող էի բան կարդալ,
Գիտել գո՞նե, ի՞նչ է անուն այս գրքին,
Ո՞վ սեղանին տէր, ծաղկնոցին ինամակալ:
Ո՞յր համար էր շինած դործի տանջանքին:
Մարդն այն յանկարծ՝ թող, ասաց ինձ, այդ գիւքըն,
Ականջդ բաց դու լու լսիր ի՞նչ պատմեմ,
Տես ովլ եմ ես, ի՞նչ է իմ դործ, իմ վարքըն,-
Տես ի՞նչ ցաւ է, որոյ մեջ ես տանջվումեմ:
Ապա՝ խեղճ խեղճ սկիզբն արեց այս խօսքին.
Գաղթայր էի Համադանու վալ ամօք,
Տնանկ, անդործ, դաստարկատն իմ կամքին,
Չունիք ես ընկեր, ծանօթ, ովլ այլ ոք:
Այսպէս երկար անտէր էի մընացած,
Շատ անցքը անցին ողորմելի իմ զլիսով,
Դժուար էր ինձ գտնել գո՞նէ և չոր հաց,
Կանցնէր կեանքս գառնութեամբ, լի ախ վախով:
Թէ և իրան՝ էի տմարդի անոպայ,
Բայց ցանկութիւն, սէր ունիք ես ուսման.
Ուստի մի կերպ զնացի, անցի Եւրոպայ,
Ուր և մաի երեկի ձեմարան:
Այն աեղ դժուար շատ տարիներ անցուցի,
Ասի ուսումն բալը մասամբը գիտութեանց,
Ապա գարձայ դէպ իմ երկիրն և բացի
Հանդէս ուսման իմ հանձարոյ գերազանց:
Ես գիտելով բաց, իմ աղքին, հինգ լեզու
Նեմցի, ֆրանցի, լատինի, Արքի և Պարսից,
Շատ շինեցի գրեանք, ահա ինչպէս դու
Չեռնիդ ունիս մին չզիտեմ քանիսից:
Է՞հ, ի՞նչ ասեմ . . . ողջ աշխարհում ինձ նըման,
Չըկայ գիտուն, և ովլ ուսեալ քան դիս լաւ,

Տես ես ի՞նչպէս պարծանք էի զարդ մարդկան. . . .
 Բայց ի՞նչ վարձու հասի, տուին ինձ ի՞նչ ցաւ:
 Ես իրաւամբք իմ գիտութեան, իմ ուսման,
 Հաւան չկացի ողջ մեծատանց իմ ազգին,
 Հին կրօնին եղէ ատող, դաւաճան,
 Ընդդէմ ազգիս հին խորթ լեզուին, ուսմունքին:
 Գրիչս ի՞նքեան ես ունելով ազաստան,
 Ինչ ուսեանք կան Փարթիզ, Աննայ, Աննեափիկ,
 Թէ կալկաթա, թէ Զմիւ անիա, Տաճկաստան՝
 Խիստ խօսքերով խոցոտեցի ես սասափի:
 Ա՛խ, թռող մնան զիշերասէր, անգրադէտ,
 Սեահոգի հին կրօնին պաշտօնեայք,
 Որ չեն այլ ի՞նչ, թէ ոչ միայն կոյր, անպէտ,
 Հնամոլ, ախմար, միալեզու խաբերայք:
 Մոյս մասին ի՞նչ գրածեմ շատ քիչ են,
 Բայց ես ունիմ ինձ հպատակ մի ընկեր. . . .
 Պատրաստ ունի ի՞նչ գեռ այժմուս յայտնի չեն,
 Պիտի յետոյ լոյս ընծայէ նոր բաներ:
 Մէք ոչ ոքից երկիւղ չունենք բնաւին,
 Մէր գործն է միշտ՝ գրել ամէն եղանակ,
 Թէ սուտ թէ ուզորդ, Ընդդէմ վասի և լաւին. . . .
 Պիայն թէ այլք մեզ անուանեն հեղինակ:
 Ահա այս են բոլոր կենաց իմ անցքըն,
 Ինքնդ գատիր, մեղաւոր էմ, սաս զու,
 Որն է արած իմ սխալմունք, յանցանքըն,
 Ինչո՞ւ համար ազգն ինձ եղե անարդու:
 Կա փոխանակ արժան փարձուց իմ գործոց,
 Աւ հասարակ դարձաւ զուր իմ թշնամին,
 Ընդդէմ ատօղ իմ ամենայն գրուածոց,
 Որ կուտած կան ահա վերայ սեղանին:

Վաղն նրանց մատղիր են այրելու,
 Իմ երեսին կարդալ վըճիւ անիծած
 Եւ ի՞նչ յետոյ. . . . ախ առանց ինչ խնայելու՝
 Քաշ տալ ինձ պյս կախաղանից պատրաստած:
 Այն ի՞նչ է տես, պյն մեծակաղմ տումարըն՝
 Հաւաքումն է որպէս թէ վատ իմ գործոց,
 Որ չկիտեմ գրել է որ յիմարըն՝
 Ցոյց տալ ազգին յապացոյց իմ յանցուածոց:
 Ի՞նչ կայ՝ մի օր պիտի յետոյ թէ յառաջ
 Աճարեմ ես կեանքըս ինչպէս պյլ մարդիկ,
 Բայց հաւատա՛ չի քաշել և հառաչ,
 Թէ չլինէր մէջ տեղ մի գալշ մունեափի:
 Այն փանաքի մահագոյժն իմ անիրաւ՝
 Քանի որ ես ծաղկնոցիս մէջ եմ կապված,
 Տուել է ինձ անտանելի, անչափ ցաւ.
 Կոր զզուելի ձայնովն, ահով անիծած:
 Ա՛խ, չեմ կարող մուանալ և յետ մահուս.
 Որ չհասայ նրան տալ իմ ուաքի տակ. . . .
 Այսպէս անյօյս վիճակին մէջ եմ այժմուս
 Ապասումեմ վերջին վճռիս գմնդակի:
 Դուրս գնա շուա, և մի մնար աստ եղբայր,
 Խեղջ ես, չընկնիս իմ ցաւոյ մէջ զուր ունայն.
 Թանգ անիծէ ազգն միշտ ինձ. . . . ինչ որ կայր,
 Կորան իսպառ իմ գրուածքն ընդունայն:
 Այս միջոցիս յանկարծ քընից վեր թրուայ,
 Ստուգեցի, թէ երազ էր՝ որ տեսի,
 Բայց և աչքիս էլ քուն չեկաւ ակամայ,
 Իմ աեսածիս վերջապէս երկար միտք արի:
 Եւ վերջապէս՝ ասացի ես ինքս ինքեան,
 Թէ ճշմարիտ՝ ով որ իցէ ստաբան:

Եկրե, աղդատեաց, իւր կրօնին դաւաճան՝
Պիտի արժան լինի այնպէս վաս մահուան:

ԵՐԿՐՈՅՔ Ը ԵՄԴԻՄՈՅՑ

Մայիս ամսոյ երեսունին՝ օրն շաբաթ,
Մեր Շամախին եղե աւեր, տիրապատ:
Հաս վատ օրի հասաւ, ախ, մեր այս քաղաք,
Մի վայրկենի զոհ լինելով խեղձ եղաք:
Տեսած էինք քանի անգքեր վերահաս,
Բայց չէր եղած այսպէս դառն պատուհաս:
Չարժն եղե անբաղդութեան մեր պատճառ,
Ու քարուքանդ արեց յանկարծ մեզ իսպաս:
Ո՞վ էր սպասում այս վայրկենիս կործանման,
Այս օրինակ անպատմելի խիստ շարժման,
Ու կայծակի նման հասաւ մեր վերայ,
Մի բոպէում անհետ արեց շատ տարուայ
Ողջ առն ու տեղ, գոյք, կարսոիք, կարք ու սարք
Չտալով բնաւ աղատութեան մեղ հնարք:
Երեկ անհոգ ուրախ էինք մեք հանդարա,
Այսօր մնացինք զուրկ ամենից մերկ, անզարդ:
Խելք չէ կարող այս խորհրդոյս հասանել,
Մեր մեղքն իսկ առնեց պատիժ մեղ առնել:
Թողլ զարմանայ աշխարհ անհաս հրաշքիս,
Ու բոպէի մի միջոցում քաղաքիս,
Տակն ու վերև եղեն հին, նոր չէնք ու առնք,
Դէմ չըկացին ոչինչ շինուածք, պինդ հիմունք:
Թողլ զարմանան, որ այսքան տեղ լայն, արծակ
Իւր սարելով, հողով, չէնքով իր անքակ,

Ինչպէս հեշտին ստեղծողին էր ձեռքին,
Շարժել քանդել, փոխել ընդդէմ հին կարգին.
Ո՞հ միտք բերել, պատմել բնակին չէ հնար,
Թէ ի՞նչ օր էր, ի՞նչ խիստ դիպոած, պատահար:
Զկար խելք յուշ, որ կարենայր հաշիւ տալ,
Թէ ուստի, ի՞նչպէս շարժն սկսեց դղրդալ.
Օրորելով տուն ու տեղեր սաստկապէս՝
Քանդեց, թափեց, ցնդեց յօդն փոշւոյ պէս:
Նկարագրել շատ հետի է խոր խելքից,
Այս սոսկալի արհաւիրքըն շարժմոնքից,
Զգայ միայն ով վկայ էր փորձանքիս,
Ով կինի ականատես քաղաքիս,
Որոյ բոյը մօտ վեց հազար բընակչաց,
Կայք ու շէնքն կործանված են չքացած,
Երեսումն մեծակառոյց շքեղ տանց
Կուտակներն միայն փայտից ու քարանց:
Ո՞չ թէ հընար շարժիս տալ ինչ գաղաքար,
Զուր կիներ ամէն դրած վայրապար,
Միայն արէք հարեւանցի ինձնից հարց:
Կարեմ ասել՝ թէ ամէնքս յուշաբարձ,
Նոյն սեկունդին՝ երբ սկսեց շարժումն,
Եւ նոյն հետայն տանց շինուածոց քակումն,
Նորահարսունք, կոյս աղջկունք, աղամարդիկ
Խառն մի տեղ, կամ գլխաբաց, կամ բորիկ,
Ով ինչպէս կայր հագնած թէ մերկ, խուճապաւ
Այ վայ տալով ձգեց ինքն դուքս փախաւ,
Դէս ՚ի փողոց և յայլ բաց տեղ՝ ուր գըտաւ,
Փոխուած ողջին գոյն երեսին զերդ կտաւ:
Ո՞հ, ի՞նչ պատմեմ, յետ այնորիկ ինչ անցաւ,
Ի՞նչ վիճակ էր, ի՞նչ պատուհաս ի՞նչ մեծ ցաւ,

Մինչ փոքր ինչ յուշե եկին իմացին,
Թէ ամենին տունք ու շնչքըն քանդուեցին,
Միոյն հայրն, միւսին մայրն, երեխայք,
Միոյն հարսն, ջոկին քրայն, բոլոր կայք,
Անգութ շարժի վկատակաց զոհ եղեն,
Կորան անդարձ ինչ որ կային թանգեղեն:
Զկար խելք, խօսք, միայն էին արտասուք,
Լաց, բառաշումն, ախ վայ աման, դառն սուգ
Թէ մեծ թէ փոքր աղջկունք, կանայք բացերես.
Յրուած մաղով ճշում էին սաստկապէս,
Հայրն որդւոյն, որդին հօրըն, մարդ ու կին,
Կորցրած միմեանց, լալում էին դառնադին.
Բայց աւելի սարսափելին լսելեաց.
Եթ ձայն վայոց այն կիսամեռ գժբաղդաց,
Որ ՚ի ներքոյ աւերակաց ողջ մնացած,
Գոռում էին մահու ձեռքին աչքաբաց:
Ո՛չ ի՞նչ ասեմ, չկար բնաւ ճար իսպառ,
Տալ փրկութիւն մեռանողաց այն թշուռու,
Ուստի այնպէս բառաշելով, զուր երկար,
Մեռան նոքա անօգնական, շարաշար:
Ո՞րը պատմեմ, ո՞րը թողում չգիտեմ,
Թէ բառ է աստ բանիս թելք ես հատեմ,
Ո՛չ չեմ կարող չգրել տալով մոռացման,
Միւս աշուելի պատահմանկըն սարսափման
Որ մի ամբողջ գերդաստանի ողջ հոգիք,
Հայր ու մայրն երեխայիւք ողորմիկ,
՚ի միասին եղան ՚ի մի գերեզման,
Որպէս թէ միշտ պիտի լինին անբաժան:
Սա այսպէս էր, բայց եկ՝ խօսեմ և սակաւ
Այն մօրերից՝ որ կաթնակեր զաւակաւ,

Չեռքին բռնած օրօրոցըն վաղումէր,
Չգիտեր ում յանձներ նորան, որ գըներ,
Ապա դաւնայր օդնել և միւս զաւակաց,
Որ չելինին զոհ այն խրոխտ վտանգաց:
Բայց ինչ ահեղ դառն էր վիճակ այնպիսուն,
Որ յետ չհասած ձանապարհի նա կիսոյն,
Տեսնումէր որ տակն ու վերե ողջ իւր տոն,
Աւերակ էր դարձել վաշե, հոգ համբուն:
Ախ, դառն էր և վիճակ կանանց ձննագական,
Որ մի երկու օրից յետոյ ազտոման,
Պառկած էին թռյլ, անգօր, մերկ անկողնում,
Անձար էին ինչպէս ծածկուին, որ կողմում,
Դրսում դիզուած մարդկան աշքից, և կամ ուր
Տեղաւորեն գողին բռնած խանձարուր:
Խոկ թէ քանի յղի կանայք այս ահից
Ուր և ինչ կերպ վիժեցին բերք, իմ գրչեց
Հեռու լինի չեմ կարող բնաւ խօսել բան,
Միրտ ու հոգիս զրաւել է խիստ սասան:
Այսպէս բոլոր աղքատք, հարուստք, մեծատունք,
Արք և կանայք, թէ մեծամեծք, թէ փոքրունք,
Ահից գողից ողջ այն օրը խելացնոր,
Տնուր, մոլոր մտել էին ՚ի սուգ լոր:
Ի՞նչ դրութեամբ մեք լուսացրինք այն գիշեր,
Աստուած գիտե ինչ տառապանք ինչ ցաւեր,
Անցին գլւսով մեր ամենին, որ անտուն,
Մերկ ու քաղցած, միտք չբերինք այլ և քուն,
Ուեր ուտելիք, մեր հանգիստն եղեն այն,
Որ չորս կողմից լսումէինք, ախ ու վայն,
Լաց, աղաղակ, ողբերգ յետոյ մեռելոց:
Կամ կոկծանք տունից, կայքից, զբկելոց:
Ցուց. Ա.

Աա չէր միայն, չվերջացաւ մեր ցաւըն,
Նոր մէկ փշուեց խախուտ, անբաղդ մեր նաւըն,
Պատճառ՝ միւս օր առաւօտեան ութ ժամին,
Շարժն կրկնեց ինչ մնացել էր, գլխովին
Քանդեց, թափեց, արեց գետնի հաւասար,
Չդիմացան ոչ ինչ հող, փայտ, քար ու սար.
Եւ որ խիստն է չկայ և այժմ մեզ դադար,
Լաց ու վայից, որ լսվումն անդադար,
Պատահումն այլ ևս թեթև կամ սաստիկ,
Նոր տատանմունք, հալին մեր սիրտ, փորոտիք:

Ահա մեր անցք, ով ընթերցող հեռաւոր,
Մեր լաց ու սուզ, մեր վիշտ արկած ահաւոր,
Կարդա, խղճա մեր վիճակին վատ, դառնին,
Թող ափան խօսք մեր արտասուաց հետ խառնին,
Եւ զի կարող չէ ոք տալ մեզ ինչ նպաստ,
Ե՛կ ազօթենք խոնարհ հոգւով մի տեղ աստ,
Որ պահէ մեզ Աստուած հեռու և զգաստ,
Զար գործերից, մեզքից և այս պատիժ սաստ
Հասայ այլ ևս ումեք բնաւ տեսանել.

Ճնորհէ հանգիստ անխուով կեանք անցուցնել,
Տայ և միջոց նորոգութեան քաղաքիս,
Իւր գութ, շնորհն ատյ փախարէն փորձանքիս.
Կա թոյլ տուեց, եղեւ շարժումն յաւերակ
Գարձաւ քաղաքս, որ լինի մեզ Օրինակ:
Օրհնեալ է Ասւրբ նորա կամքըն, փառք Կորան,
Փառք, գոհութիւն այժմ և միշտ յաւիտեան:

ՀԵՂԴԻՆԱԿ ԱՊԱՀՈՒՅԵՐՈՂ,

Հեռի հեռի ինձնից երկար,
Անիծեալ գու վաստ, չար սգի,
Յիմարացայ բնութեամբս տկար,
Մատնեցի քեզ իմ սիրտ հոգի:
Զար ես 'ի բնէ գործքերդ թիւր,
Վաստ գաղափարքդ՝ մեղաց պատճառ,
Զըրկանք, վնասներ տուին ինձ բիւր,
Թափուր մնացի պատուից խպառ:
Ինձ քո տուած շահ ու արդինք,
Եղին միայն անէծք, մուր, թուք
Քո ուսուցած շնորհը գիտութիւնք
Ծնան ամօթ վիշտ, ցաւ ու սուզ:
Ո՛հ ի նչ գըտի, ով չարախոհ,
Հետեւելով քեզ կուրաբար՝
Ազգը թողած, եղէ քեզ զոհ
Յիմար բարուքս, վարուքս մոլար:
Ստրուկ էի քեզ անազատ,
Բոլոր մասամբք ես խայտառակ.
Խսկ իմ ազգիս անհարազատ
Որդի մոլի և անառակ:
Հայ ես ծընայ, բայց ազգատեաց
Եղէ կամացդ հետեւելով,
Փուչ, մուչ բարեօք քոյ մնոտեաց
Տղայօրէն միշտ խաբուելով:
Ո՛չ, ոչ գու շար իմ թշնամի,
Քեզնից այժմէն հրբաժարիմ,
Ազգն իմ այս բարի կամի
Իւր սերնդոյն հաւատարիմ:

Ես մոլորուած չ'ընդունեցի
 Կորա խըրատ, յորդուանքն,
 Քո ծուռ կամբն միշտ պաշտեցի
 Տաեսնելով՝ իմ յանցանքն:
 Քանի՛ քանի՛ խոհեմ անձինք
 Լացին խղճիս գառնին վիճակ,
 Տալով երեմն ինձ նախատինք՝
 Դործոցս արժան վարձ ու պատի:
 Արկնիմ՝ քեղնից հըրաժարիմ,
 Քաղուիր ինձնից, ով ողի չար,
 Դառնամ, զզջամ, խոստովանիմ
 Մեղք, սխալանքն իմ անհամար:
 Դառնամ գէպ իմ աղջն Հայոց,
 Ես մօլորեալ նորա որդիս.
 Տալով գլխիս քարինք վայոց.
 Բանամ խորին ցաւեր սրտիս:
 Հայ մարդ, Հայ աղդ էլ մի՛ դատիր,
 Աղաչումեմ իմ յանցանքըն.
 Էլր ինձ խնայօղ, անմեղադիր,
 Մեղայ, գիտեմ իմ սխալանքն:
 Մեղայ ես քեզ, մեղայ աղդիդ,
 Անհաշտ, անզեղծ, վատ վարժունքով,
 Զգումեմ ինքս, մեռնեմ ոտքիդ,
 Մեղքերս կեղտ արարմանքով:
 Մեղայ բանիւ, գրով, գործով.
 Ես քեզ ընդդէմ, քո սրբութեան,
 Վաղոց տեսեր ինքդ փորձով
 Ողջ հետեանք իմ լրտութեան:
 Տեսեր՝ բնչպէս կեղծեօք ես միս
 Քաշումի իբր աղգասեր.

Տեսեր՝ թէ ինչ ձեռվ խարդախ
 Լոյս գձեցի ես վաս բաներ:
 Բացած էի մենակ հանդէս,
 Իմ ծուռ գրչաւ լեզուովս արձակ,
 Եւ ինքնիշխան ուղածիս պէս
 Խօսումէի լիրք համարձակ:
 Շատ ես գրեցի սուտ, ստահակ,
 Ինչ որ յարմար էր իմ խելքին՝
 Ընդդէմ աղգիս քեզ հակառակ,
 Ընդդէմ խղճի, սուրբ օրէնքին:
 Բերան առած մի առարկայ,
 Խօսումէի միոյն դիմաց.
 Բայց վեր ՚ի վայր ողջին վերայ
 Կուտում էի բանք լուտանաց:
 Բոլոր գրուածս ժահը էր ու թոյն,
 Դառն պատուղ նենգժոտ սրտիս,
 Բուն հիմն արմատ իմ խորհրդոյն,
 Էր ծուռ մնունդս յօտար տեղիս:
 Այս իսկ հոգւով խառնավինդոր
 Ունիմ շինած հինգ վեց գրքեր.
 Եւ այս գործով հատակոտոր
 Միտքս էր ձարել մեծ մեծ փառքեր:
 Մարաւ գոլով լուի իմ շահուն
 Եւ միւս մասանց հետեաբար,
 Զանքըս էր որ սիրտ ամենուն
 Որսամ թաքուն ես գողաբար:
 Կարծում էի՛ չկայ գիտուն,
 Ուսեալ, խելօք աղգիս միջին,
 Կարծում էի զիս իմաստուն,
 Լոյս, վասք ու զարդ, գլուխ ողջին:

Ես իմ յանդուզն բնութեամբս մոլար,
Ավկել էի տալ հայհոյանք,
Կարծելով թէ իցէ հնար՝
Գտնել ինքեան պատիւ, պարծանք:
Փորս էր ծակվում չար նախանձից,
Երբ տեսնէի ոք մի հարուստ.
Գործս էր միշտ ամէն անձից
Խրլել ինքեան բռնի ապրուստ:
Ծանօթ էի լաւ իմ ազգին,
Նորա հին, նոր փառք ու պատույն.
Փուշ էր գարձել նորա ոսկին
Աչքիս համար, ինձ մահ ու թոյն:
Ինչ հայրենիք, ինչ և պարծանք,
Ինձ հարկաւոր չէին բնաւին.
Սովոր էի տալ անարգանք
Ոչ միայն վատին, այլ և լսւին:
Հոգեորաց մեծ ու փոքուն
Մասին գրեցի անլուր բաներ.
Հայհոյանքիս յայտնի թագուն
Հիմն էին միայն չար խորհուներ:
Համարեցի նըրանց անպէտ,
Խաւար, տգէտ, սեահոգի.
Թէ՛ քահանայ, թէ՛ վարդապէտ,
Զինայեցի ես ոչ ոքի:
Զամաչեցին յիշել անուանք,
Այլ և նախնի Արբոց Հարանց.
Տալով նոցա խիստ պարսաւանք՝
Նոյն բաղմաշխատ նոցա արդեանց:
Զգիտելով ես լաւ գրաւառ՝
Անարգեցի այս հին լեզուն,

Եւ պարծանօք միշտ անափառ՝
Համարեցի նորն՝ սիրուն:
Թէ և նորըն խառնափնդոր,
Խորթ ու խառն էր բոլորովին.
Բայց ես ստիպմամբ եղէ յորդոր
Գործ գնել սիրել այն ամէնին:
Եւ ուղղափառ Եկեղեցին,
Առաքելոց շինած կարգեր.
Որպէս թէ են անպէտը ու հին
Կորոգելու գրեցի խրատներ:
Խմբագրէի մի օրագիր,
Մի ջոկ կարգաւ նոր հիափայլ.
Տարածեցի ամէն երկիր
Գաղափարներ շատ այլ և այլ:
Կեմցաց, Փրանսոց, Լատին, Թուրքաց,
Թուսաց, Յունաց գրուածքներից.
Ժողովեցի նիւթք խորիմաց՝
Թարգմանօրէն, իբրև ինձնից:
Եւ այս վաստակ այլոց պատկան
Վաճառեցի Հայոց ազգիս,
Որպէս բարիք իմ սեպհական,
Զիմանալով չափ այս մեղքիս:
Բաց յայսմանէ ես անամօթ
Յօրինեցի սուտ նամակներ,
Անուամբք ոմանց անձանց ծանօթ՝
Տալով ինքս ինձ գովասանքներ:
Զհաւանեցի ողջ Հայաստան,
Ոչ վենետիկ, ոչ Կալիաթա,
Ոչ Ջմիւնիա և Տաճկաստան
Եւ ոչ Փարէզ, ոչ և Վենետիկ:

Ամենից շատ և մեծ դիտուն
Համարեցի յիմարաբար
Ես իմ անձս դատարկասուն,
Սնապարծ, անհաշո, իրառվարար:
Այսպէս բոլոր ազգիս վերայ
Միշտ թափեցի վատ հայ հոյանը,
Դրեցի զուր, սուս՝ անխիղճ, անխնայ,
Ուստի ծընան պյժմեան զլջանք:
Բայց դու Հայ ազգ՝ հին ամօթիսած
Համբերեցեր երկար, անխօս,
Զփակեցեր բերանս բաց,
Հկարեցեր լեզուս ստախօս:
Թօրշեր ազատ ինձ իմ կամքին,
Եւ ես վստահ սանձակուոր՝
Շատ փրփրեցայ ընդդէմ կարգին,
Մոլի ձեռվ, մըսօք խոտոր:
Չնայեցեր խարդախ. ձեռյն,
Լրբաբար կեղծ իմ կողմանս.
Չնայեցեր, որ չեմ բուս, Յոյն,
Բայց ունէի պօչ անուանս:
Սա այն դիտմամբ եր՝ որ արձակ
Կարենայի տալ անարդանք,
Լենէր լեզուս բաց ու անփակ,
Չհամարեին ինձ ամօթանք:
Այսպէս կերպ կերպ, անուններով՝
Վարդապետ, կոմս կամ իշխան, բեր
Հոչակուեցայ շատ թերթերով
Ես փառամոլ սրդիդ քո հետ:
Ինչ հընարքով չեցեր շինած
Իմ սուտ անուն՝ կեղծ դիմակս,

Բայց ականջեցս, ձայնից լըսած
Ցայտնի եղև սեռ, տեսակս:
Այս ամենից թող լաւ յայտնի
Լինի անուն հեղինակիս.
Թող և ասեմ խօսք մի քանի
՚Ի մասին իմ հայրենիքիս:
Պապս եր բնակիչ Պարսկաստանու,
Խոյ քաղաքից փախստական.
Բայց սերունդը Համադանու,
Որոյ ունէր կերպ սեռական:
Հայրս եր անձն յոյժ գովելի,
Ունէր անուն նշանաւոր.
Մօրս ազգն եր ողորմելի,
Անյայտ, աղքատ ու չքաւոր:
Մէք գաղթական անցաք Վըստան,
Յեսոյ թիվիկը, ուր Հայվաբար
Տեղի եր մեր բնակութեան,
Ապրուստ արինք մէք վատ դժուար:
Անբաղդ եղէ երբ որբ մնացի,
Գլխովս անցան շատ վատ անցքեր,
Չունէի մի կտօր հացի,
Անինամ էի անտուն, անտէր:
Այս վիճակիս մէջ ես երկար
Քաղեցի դառն տառապանքներ,
Զկար ինձ մի յոյս փրկարար,
Չուր կանցնէին իմ տարիքներ:
Վերջն՝ մի Հայ իշխանազուն
Խղճալով իմ անտէրութեան,
Տուեց ապրուստ ըստ իմ չափուն
Այլ և տեղի բընակութեան:

Ծատ ցոյց տուեց նա ինձ ինսամք,
 Երկրորդ Հայր էր՝ իմ բարերար.
 Նորա շնորհիւ միւս բարեկամք
 Հասուցին ինձ փոքրիկ գումար:
 Այրի մօրս հողս ու կարիք
 Քաշումէի ես անթերի,
 Անցին ապա քանի տարիք,
 Ինքս տուի տաման սէրի:
 Մի հնաբքով զըսի միջոց
 Հոգալ վերայ ապագայիս,
 Ուստի յաւաջ մըսի դպրոց
 Գարնան սկզբին, որ էր Մայիս:
 Անցան ամսոն, աշոն, ձմեռն,
 Միւս գարունքին բանս փոխուեց.
 Բարերարիս առատ ձեռն
 Ֆոկ ձմնապարհ ինձ ցոյց տուեց:
 Եւ նորա իսկ բարի խրատուք
 Ուզի ընկայ գեղ Ռուսատան,
 Ուր և շուտով համեստ վարուք
 Գոփ ինձ ես նոր ապաստան:
 Զանցաւ երիք տարի ու կէս,
 Յառաջադէմ իմ ուսմոնքով.
 Բացի ինքեան արձակ հանդէս՝
 Գնացի . . . քաղաք այլոց ծախքով:
 Այս տեղ և միւս քաղաքներում
 Եւրոպայի զիանոց մօտին,
 Հմուտ եղէ նուրբ բաներում,
 Ուսելոց մօտ չէի յետին:
 Գասաւաւթիւնն չէր մի միայն
 Գործ, պարագմոնքս, այլ և զըսի

Կրօն մի ջոկ միանդամայն՝
 Ընդդէմ բնական իմ հաւատի:
 Ասածս՝ աղանդ էր Լուտերին,
 Որ ես անփորձ յիմարաբար
 Ընդունեցի և շատերին
 Ուսուցի այն կրօն մոլար:
 Այս վատութեանս հետ միասին,
 Գլուխս այլ և շուտ կապեցին՝
 Տալով կոյս մի ինձ ամուսին,
 Որով և սիրոս միշտ գերեցին:
 Այսպէս եղէ թիւր ուսմոնքով,
 Հաւատափոխ Լուտերական,
 Եւ այս վատթար համոզմունքով
 Գարձայ իբրև ուսումնական:
 Կախ . . . գաւառի համալսարան
 Էր տեղի իմ ծառայութեան,
 Որ և եղեւ իսկ փորձարան
 Ուսուցութեան իմ գիտութեան:
 Այս տեղ գրեցի կարճ պատմութիւն
 Կախնեաց լեզուին հին գրական,
 Որով ցուցի իմ հմտութիւն:
 Եւ այն լեզուով ճոխ Ռուսական:
 Այս վատակով ես ստացայ
 Աստիճանիս մեծ կոչումը,
 Ուստի շուտով հոչակուեցայ
 Ցայտնի եղեւ իմ ուսումը:
 Զանցաւ երկար, եղեւ հընար
 Գտնել պաշտօն . . . մայր քաղաքում
 Աստ և բացուեց ինձ ձանապարհ
 Գործ դընել ինչ կայր իմ մաքում:

Ուստի յառաջ սկիզբն արի
 Ցոյց տալ ազգիս իմ մեծ անուն,
 Եւ այս մաօք ձեռնս առի
 Հին գրաբառ Խրթին լեզուն:
 Թէ և գժուար էր այս իմ գործ,
 Բայց մի կերպով դիմում բերի,
 Յետոյ արի ես մի ջոկ փորձ,
 Բայցի հանդէս նոր օրագրի:
 Այլ զի հեշտ էր աշխարհօրէն,
 Թողի հինը, ես նորովըն
 Շատ բան գրեցի ազատօրէն,
 Ինչ անցկացան իմ մըսքովն:
 Այսպէս քանի մեծ հատորներ
 Շարադրեցի ես տիպ տալով.
 Կան այժմ այլ և շատ կոտորներ
 Անյայտ այլոց անտիւզ մնալով:
 Բայց ամենից ինձ թուելին,
 Այն է որ իմ բոլոր վաստակ.
 Կորաւ և իմ ակնունելին
 Խայտառակեց ինձ ողջ խստակ:
 Ո՛չ, մեծ է իմ սրտի աղէտ,
 Չունիմ դադար, ոչինչ հանդիսու,
 Կորայ խսպառ, ո՞չ ես յաւէտ,
 Այսպէս եղեւ օրհասն իմ խիստ:
 Օրինակի այլոց համար
 Ես ակամայ երկարօրէն,
 Գրեցի ազգիս տալով համար,
 Ամէն իմ գործք վատ, ապօրէն:
 Չունիմ այլ ինչ ճար իրաւունք,
 Պիտի զզամ շատ տարիներ,

Բայց կյանկամ՝ որ նոր ուսմունք
 Չլինին այլոց մոլորիչներ:
 Ո՛չ, չայ մանուկ կաց միշտ զգաստ
 Պահիր պինդ քո ազգայնութիւն,
 Թէ և իցես անուամբ նուաստ,
 Հին է ազգիդ պեղճ վեհութիւն:
 Ազգ, կրօն, լեզու, երեք այս բանք
 Յարդելի են քան ամէն ինչ.
 Սոքա են քո կենաց կապանք,
 Սուրբ յիշատակք, նշանք անջինջ:
 Ո՛վ ուրանայ նրանց՝ չունի
 Անուն մարդկանց սեռի միջում.
 Բայց դու յարդիր և ընդունի՛
 Իրաւ կինիս ամէն վիճում:
 Մի մոռանար, միտրդ պահիր,
 Անդամ ես դու Հայոց ազգին,
 Զանք արա միշտ նրան շահիր,
 Կուիրելով քո սիրա, հողին:
 Եւ արեամբ չափ միշտ աշխատիր
 Լինիլ հլու և հպատակ
 Հոր մեծ կայսեր, լեր ջանապիր
 Որդիանալ անկեղծ, իստակ:
 Աստուածակոյս նա է Փրկիչ,
 Տէր և սատար հետ քո ազգին,
 Կա բարերար, նա ազատիչ,
 Չո՞չ լեր նորա սուրբ օրէնքին:

ԿԵԸՆՅԲԻ ԴԵԱՄԵՐ

(ՆՈՒԷՐ ՍԻՐՈՂՆԵՐԻՆ)

I.

Ո՛վ անզգայ, խիստ, անողոք,
Երբ կրլսես ցաւոյս բողոք:
Քանի՞ տարի դու անխափի
Ասանասիրտ ես դէպ իմշինդիր:

 Չեն թռուում քեզ իմցաւ, իմ վեշտ
Անողում ես, անխիղճ դու միշտ
Ողջ իմ կեանքս տուի քեզ զոհ,
Բայց դու իւիք չարիր ինձ դոհ:

 Ո՛չ թէ զործով, այլ և բանիւ
Չտուիր վարձ ինչ արդեանցս անթիւ,
Կորաւ իսպառ ՚ի զուր իմ սէր,
Իմ չարչարանքն ցերեկ գիշեր:

 Ել ինչ ինձ ճար, ինձ միսիթար.
Դու իմ վերաս ել մի՛ իսիթար,
Ում ուզումէս՝ սիրի՛ր վըստահ,
Թաղ շուտ փակէ աչքերս մահ:

 Բայց իմացի՞ր՝ ով սիրուհիս,
Որ դու ես իսկ պատճառ մահիս,
Եւ մնումես ինձ պարտական
Գալոց կեանքում մեր հոգեկան:

 Վերջին են իմ քեզ այս խօսքեր,
Թաղ մնան սրտում դառն վէրքեր . . .
Կ'գան օրեր մեր նոր կեանքին,
Ալինիմ արժան տեսոյդ կրկին:

II.

Ո՛վ անցնումէ շեմքովիդ՝
Պարծենումես դէմքովիդ,
Բայց ինչ օգուտ քո տեսքից,
Երբ աղքատ ես խելքովիդ:

 Գեղեցկութիւնն մեծ բան է,
Որ սիրոյ միշտ կապան է,
Ո՛վ այն ունի, սիրո չունին,
Բընաւ չէ մարդ՝ անքան է:

 Փարումեն շատք քեզանով
Կապուած սիրոյդ պարանով,
Դու չունիս ինչ զգացմունք,
Կին չես հոգւով՝ մի բանով:

 Սիրո սիրահ՝ որ սէր զգայ,
Սիրոյ ցաւոյն և տոկայ,
Քեզ յայտնի չէ իսկ ոչինչ,
Ճնչաւոր ես անզգայ:

 Պակասաթիւնդ չէ քեզնից,
Այն տուած է ընութիւնից.
Այդպէս դու միշտ մինչ ցմահ
Չես զոհ լինիլ նորանից:

III.

Եւայի սեսից մի ես հատընտիր,
Հաղարաց միջին քեզ կայ մեծ խըտիր.
Հաղիւ կդըտնուի Ադամայ որդի,
Որոյ չդառնաս դու գերիչ սրտի:
Դժուար է դժուար, զեղեցի ամիկին,
Չէ կարող տանիլ ոչի հոգին:

Քո լուսանկար, փայլուն պատկերին,
Սրտակէզ կրակի գըրաւող սերին:
Ով չէ զմայլում քո քաղցրիկ տեսով
Ոյր միտք չէ վառվում երեսիդ լուսով,
Քո անուշ հայեացը թեթև ժպիտով
Գերի ես անում բոլորին սրտով:
Այդպէս բնութեան առաւտ պարգեօք
Զարդարուած ես դու, չկայ այլ և ոք,
Որ չկարդայ քեզ բիւրիցս երանի,
Որյ և չիցես գովեստ բերանի:
Բայց ինչ օգուտ, որ սառն է քո հոգին,
Չունի ոչ ոքի սեր քեզ մօտ ինչ գին,
Չես զգում ոչինչ՝ որպէս թէ ես քար,
Կեանքդ է անցնում անպտուղ, խաւար:
Գործդ է միայն հագուստ, զարդարանք,
Դա է քոյ իսկ փառք, քո միիթարանք:
Ափսն բիւր անդամ, որ դու մինչ կենդան
Բոլոր քո կենօք եղեր անպիտան:
Քեզ բնութեամբ տուան շընորհք առանձին,
Անարդող ես դու ինքդ քո անձին.
Չես վայելում այս աշխարհիս հրճուանք,
Չդիւես անզին կեանքիդ հետեանք:
Ո՛չ կենդանի ես, ոչ և իսկ մեռեալ,
Եդական սեռիդ կարգերից թիւրեալ,
Չունիս զգացմունք՝ սիրոյ փոխագարձ,
Չես կարող և տալ հաճոյից ինչ վարձ:
Փայլուն արտաքին քո երեսիթով
Հաստոնք խաբուեցան, ապա ամօթով
Հեռացան քեզնից, խօսքերը մէկ եր՝
Թէ ինչպէս արձան, անշունչ ես պատկեր:

Ծընած ես մի հրէշ դու կանանց ազգում,
Զնւր են քեզ սիրում, զուր երկրպագում,
Զնւր է անպտուղ քո գեղեցկութիւն,
Չկայ քեզանում սիրոյ յատկութիւն:
Վայ օր ու կեանքին քո սիրող մարդոյն,
Ծանր է ամէն մի աղամայ որդւոյն:
Ունիլ կենակից անսիրտ, անհոգի. . . .
Տանել չէ կարող բնութիւն ոչ ոքի:
Այդպէս և կմնաս ինքնդ միշտ անբաղդ,
Եւ բնութեան օրէնք անփոփոխ, անյաղթ,
Քեզ կհացնեն մինչ ՚ի գերեզման,
Վերջ կիլնի կեանքիդ՝ առանց վայելման:
Ահա ես հմււտ, շատ ամաց փորձով,
Ճիշտ ճանաչելով քեզ և իսկ գործով,
Քո վարք ու բարքըդ, քո բնութեան արաւու
Ասեմ և խօսեմ այս ամէն քեզ՝ խրատ:
Բայց գիտեմ և այն հաստատ աներկբայ,
Որ միշտ բիրտ, անփոխ, կմնաս խարեբայ,
Անծանօթ սեռիդ պատույ, իրաւանց,
Զուրկ վայելմոնքից գեղօյդ գերազանց:
Ան բնութիւն, բնութիւն է՞ր ես անընաիր,
Տալիս գեզ, շնորհ շատոնց անխտիր,
Ինչ շահ անզգայ, քարացած սրտից,
Է՞ր պիտի մընանք մէք զուրկ այն օդտից:
IV.
Քանի դառնին ցաւեր զգամ, առ այս
Քանի երկար լամ ու սգամ, առ այս
Ո՛չ, քո տեսոյն միայն ցանկամ, առ այս
Ցանկամ այլ ևս գեթ մի անդամ

Գրկել սեղմել քեզ մէջ կուրծքիս մա՞ս
 Թեթևութիւն տալ խիստ վէրքիս անջ
 Քարացեալ ես խըղճմբանօք առարձա չ պայ
 Զես նշմարում հեծեծանօք առամբազ լոյջ
 Լայ, աղետքաւ որ անոք ո ո լոյ Ա
 Ես քո գերիդ փափաքանօք չ պայ
Մընացել եմ տեսոյդ կարօտ
 Սրտով տիսուր, հոգւով ճերօտ:
 Քեղնով ոմանք գոհ միմիթար, ան ա սիրու Ա
 Վայելումն սէրդ անդսդար: Համանակ ու
 Իմ մասին ես խիստ անարդար, անզաւ չ պայ
 Ուստի չունիմ հանդիստ դադար: Համանակ ու
 Պիտի ցանիմ, հալուիմ, մաշուիմ,
 Գիշեր ցերեկ սրտովս խաշուիմ:
 Ո՛հ մի՛թողուր ինձ յուսահատ
 Այս վիճակում դասն ու վհատ:
 Դու ես միայն իմ յոյս անհատ, անոնք ուսու
 Թայլ առոր կրկին ես անընդհատ:
 Առաջնոյն պէս անահ, վասահ յանձնու
 Վայելեմ սէրդ մինչև ցմահ: Հայու ինու
 Այս առորք քարեաց քո շընորհաց
 Կըտայ կրկին իեանք իմ կենաց:
 Եւ նոր պտղովք նոր հրճուանաց
 Արձարեմ դեղ հին այն վշտաց:
 Որ զուր երկար ինձ մաշեցին,
 Սիրտ ու հոգին իմ խաշեցին:
 Դու այս գըթով կըտաս դիպուած համա
 Բառնալ սրաից սիրոյդ հարուած, անին համա
 Եւ վիճակիս նոր այս դարձուած համա ու Ա
 Կըպահպանէ Տէր մեր Աստուած,

'Ի փառս պատիւ իւր պէտութեան,
 Եւ վարձ հոգւոյն քո յաւիանն: Առաջ
 Վաղաւորափ ունի, ույ լոյժ ունձութիւն
 Արքանուն ապա անձու նախ պարագ
 Քաղցրախօս լեզուդ էր է այժմ լուս, մունջ,
 Է՛ր ես դու ծածկում սրաիդ վիշտ մըմունջ:
 Ոյր մեղքն է, ասսա որ դու ան հըմուտ
 Սիրոյ խորհրդոյն եղեր հետամուտ:
 Քաղցրիկ երազովդ փակ, մութ զգացմանց
 Կամեցար հասնիլ վերացեալ մոած մանց:
 Սուտ էր փաղաքշանք՝ սէր կեղծուղաւիր,
 Զէիր դու կարող դընել ինչ խըսիր
 Լուսաւոր կամ մութ սիրոյ հետեւմանց,
 Նորա սուրբ նրբին փոխադարձ բերմանց:
 Ծովու է նըման նորա խորհրդուց:
 Շատոնք եղեն նրան խիստ ալեաց յագուրի:
 Հնամ ես դու թշուառ, անդէտ աշխարհի,
 Միամիտ նըման հեղիկ ոչխարի:
 Վաղ էր շատ դեռ ես քեզ պէս անփորձին,
 Զենամուխ լինել այդ գժուար գործին:
 Դու չես ծանօթ քոյ միտ դբած բանին,
 Քեզ անյայտ է այդ բնութեան խոր գաղտնին:
 Թաղ ուրեմն խղճուկ, արհաս դու համբակ,
 Այդ խորհուդ պիտի մնայ դեռ ես քեզ փակ.
 Դու դեռ չես հասուն, այդ կայծ է անզօր,
 Կամ նըշան եռուն արինիդ թարմ նոր:
 Ո՛հ, կպատահես դու շատ փորձանքի,
 Զես կարող տանել սիրոյ յորձանքի:
 Թոնքնութիւնն եփի քո սիրա, քո արիւն,
 Թոնդ համնի այլ ես հասակդ սիրուն.

Կ'գայ ժամանակ և քո նպատակ.
Կ'առնէ քեզ կըրից ծառայ՝ հպատակ,
Կ'փորձես սիրոյ լաւ, վատ կողմոնքն՝
Քաղցր կամ դառնին նորա բերմոնքն.
Հանդէպ կիշնին քեզ վշեր և ծաղկունք,
Ցաւք, միկթարանք, պէսպէս փորձութիւնք:
Եւ ապա կըմնան նոցա հետեւանք՝
Լայ ու արտասուք և ապաշաւանք:

VI.

Չես նըմանում երեւք կնկան, ուսի ոչ առայ
Թէ և սեռովդ ես իդական.
Չեն օգուտ քո տեսք, արտաքին,
Սառն է սիրադ կուրծքիդ ասկին:
Սիրումն քեզ այս շատեր,
Այն սէր չէ ջոկ ձեւ է թատեր,
Խաղալիք ես նոցա աչքին,
Զորիկ են նորա այն նուրբ ներքին
Զգացմունքից, վեհ խորհրդից,
Որ ունին բուն ծագումն արտից: —
— Զկայ ձեղնում սէր իսկական,
Այն ձեզ բընաւ չէ յատկական,
Բառն հիմն է այն մեր ողջ կեանքին,
Զարդ գոյութեան, մեր իսկ հոգին: —
— Մեծ շնորհք պէսպէ են, փորձեր երկար,
Այդ գործ չէ ձեր մըտաց արկար,
Կաթնակեր էք անփորձ, ախմար,
Աւելորդ է խրատ ձեզ համար: —
— Դեռ կուրութեան մէջ կըմնաք,
Չեր կոչումը ուշ կիմանաք,

Միայն մոքելցնուք մի՛ հանեք,
Որ շունիք կեանք, անկենդան էք:

VII.

Այնքան անփոփոխ, ջերմեւանդ սիրող,
Այնքան պինդ պահող սիրոյդ յիշատակ.
Այլ մաերիմ քեզ, սրտիս տիրող,
Ով և քեզ պաշտօղ ինձ պէս հպատակ:
Ոչ օր, ոչ ամիս, այլ ողջ տարիներ
Ընցոցի ուրախ միայն քո սիրով,
Ունեիր թէպէտ և միւս գերիներ,
Որոց սիրու վառ էր նոյն սիրոյ հըրով:
Բայց քաջ յայտնի էր քեզ և իսկ վարձով,
Որ այլ էր իմ սէր, իմ սիրա, իմ հոգի:
Ինչպէս հազարից ցոյց տուի գործով՝
Քեզ էին զոհած, և ոչ այլ ոքի:
Իմ մոերմութիւն, իմ խորին գորով,
Ամեն միտք, խոկմունք և կեանքս զլսովին
Քեզ նուրիեցի հալ ու մաշ, խորով,
Անկենդան էի ես բոլորովին:
Շատ էր իմ աշխոյժ, չկայր ինչ պայման,
Յուշ վերացեալ կորած էր համայն.
Զկոյլ իմ ներքին զգացմոնց թարգման,
Ինքս իմ չէի ես միանդամայն:
Ով չէր զարմանում իմ վերաս ցաւօք,
Ում չերեացի խպառ խելագար,
Որ չէր ինձ թլուում քեղնից այլ լաւ ոք
Սիրովդ կուրացած, բնութիւնս էր տկար:
Բայց ինչ և յետոյ. . . . ասա դու ինքնին,
Ինչ վարձ ինձ տուիր, ինչ արդիւնք սիրոյս,

Ինքդ մատծիր, մարի՞ ՚ի քննին
Մնաց յապագայն ինձ համար ինչ յոյս:
Ախ, ով սէր իմ, սէր հոգւոյս գերելար,
Քեղ եմ պարտաւոր իմ դառն վիճակաւ,
Դու էիր միտակ կեանքիս կառավար,
Քեզնից եմ իմում լեղի բաժակաւ:
Վայ այն յիմարին՝ այն անփորձ մարդոյն,
Որ անգետ գոլով խոր հրդոյդ խորին
Քաղցր են համարում մահաբեր քո թոյն,
Զեն ջոկում բնու ոչ չար, ոչ բարին:
Դառն են խիստ, դառն, հետեւանք քո սէր,
Դժուար է դիմալ քո խոր հարսւածոց,
Քանի կան սրտեր խոցուած կարելիր,
Են քանիք մըտան քեզնով հողոյ ծոյն:

VIII.

Կրկին իմ խօսքս քեղ հետ է աղջիկ.
Քեղ իմ նուիրած իմ միաք, յուշ ողջեկ.
Վաղ է ինձ յայտնի՝ սիրոյ գօռութիւն
Չունի քեղ մերայ ինչ ներգործութիւն:
Քարացածես բնու, չես ինձ անկնդիր,
Զուր են քո գործքեր սուտ, կեղծուպատիր,
Գիտես՝ չէ սիրողդ անփորձ, խելացնոր,
Ալրոյ հանդիսում կրթուած է ոչ նոր:
Շատ մեծ կորուստ էր՝ այլ և մի վայրկեան
Զոհել քեղ նըման անդդայ աղջկան:
Գընա, Տէր քեղ հետ էլ չկայ օգուտ,
Ինքը կրզչաս շատ ու շատ և շուտ:

IX.

Ան ծանրէ, որքան գլխար մասն
Քեղ տեսնելոյ գտնել դիպուած:
Ինչ ես տալոյ չեմ յօժար, յախ այս մ' ձայս
Թէ իմնէի քեղ հետ կապուած: միմանք յակ
Է՞ր ես փախչում, ինչո՞ւ թագչում:
Ինձ աեսնելուց վայրէնոյ պէս, ուժուով
Կրումես երկիւղ, թէ ամաշում:
Կամ կամքդ է սէրբս զսպես:
